

Հոգեպես աջակցող և ընկերակից կենդանիները հանրային կացարաններում

Հրատ. թիվ 7156.10 Armenian – Հունիս, 2020 թ.

Ընկերակից կենդանի

Շուն, որը.

1. անհատականորեն վարժեցվել է
2. հաշմանդամություն, այդ թվում՝
ֆիզիկական, զգայական ընկալման,
հոգեկան առողջության, մտավոր
հաշմանդամություն կամ այլ տեսակի

Հոգեպես աջակցող կենդանի

Կենդանի, որը.

1. թեթևացնում է անձի
հաշմանդամության
2. հետևանքները՝ տալով
հարմարավետության
3. զգացում կամ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ընկերակից կենդանուն կարող է վարժեցնել
մասնագետը, ընկերը, ընտանիքի անդամը կամ հաշմանդամություն ունեցող
անձը:

Ընկերակից կենդանի

Հոգեպես աջակցող կենդանի

Կացարաններ (գիշերում)	ԱՅՈ	ԱՅՈ, եթե համաձայնեցվել է որպես ողջամիտ հարմարություն
Կացարաններ (ցերեկային սրահում)	ԱՅՈ	ՈՉ
Ընկերություններ, խանութ-սրճարաններ, ռեստորաններ, գրադարաններ, հիվանդանոցներ	ԱՅՈ	ՈՉ
Հյուրանոցներ	ԱՅՈ	ՈՉ
Ինձ անհրաժեշտ են ընթացիկ պատվաստումները	ԱՅՈ	ԱՅՈ
Ինձ անհրաժեշտ են բաճկոնակ, հավաստագիր և այլն, որպեսզի ցույց տամ, որ կենդանիս օգնող կենդանի է	ՈՉ	ՈՉ

Ծանոթագրություն. մանրամասն տեղեկությունների համար տե՛ս «Կացարաններում և հանրային վայրերում ընկերակից և հոգեպես աջակցող կենդանիներ ունենալու իրավունքները – ՀՏՀ»:

Հարցեր, որոնք միգուցե առաջանան ընկերակից կենդանու հետ հանրային վայր կամ կացարան մտնելիս (եթե հաշմանդամության հետ կապված կարիքն ակնհայտ արտահայտված չէ).

1. Անձը ունի՞ կենդանու կարիք, որը կապված է հաշմանդամության հետ:
2. Կենդանին ինչպիսի՞ աշխատանք կամ առաջադրանք կատարելու համար է վարժեցվել:

Հարցեր, որոնք հնարավոր չէ տալ.

1. Ինչպիսի՞ բնույթ ունի անձի հաշմանդամությունը: Կամ ի՞նչ ախտորոշում ունի նա:
2. Անձը կարո՞ղ է բժշկական տվյալներին մուտք ունենալ, որպեսզի ապացուցի իր հաշմանդամությունը:
3. Կենդանին հավաստագրվել, վարժեցվել կամ լիցենզավորվել է որպես ընկերակից կենդանի՞ :

Որ դեպքերում ընկերակից կենդանուն չի թույլատրվի մտնել վերոնշյալ վայրերը.

1. Կենդանին անմիջական վտանգ է ներկայացնում ուրիշների համար:
2. Կենդանին տիրոջ խնամքի կամ հսկողության տակ չէ և (կամ) ընտելացված չէ:
3. Կենդանու ներկայությունը էապես կփոխի ապրանքների, ծառայությունների կամ ծրագրերի բնույթը:

Եթե հաշմանդամության հետ կապված կարիքն ակնհայտ արտահայտված չէ, հոգեպես աջակցող կենդանու հետ կացարան մտնելիս կացարան տրամադրողը կարող է խնդրել ներկայացնել փաստաթուղթ այն մասին, որ.

1. ունեք հաշմանդամություն, և
2. կենդանու կարիք, ինչը կապված է հաշմանդամության հետ:

Ծանոթագրություն. չեն կարող պահանջել մուտք ունենալ բժշկական տվյալներին:

Ողջամիտ հարմարություն ունենալու դիմումները կարող են մերժվել, եթե կենդանին.

1. անհրաժեշտ չէ տիրոջ հաշմանդամության պատճառով,
2. անմիջական վտանգ է ներկայացնում այլ մարդկանց կամ սեփականության համար,
3. տիրոջ խնամքի կամ հսկողության տակ և (կամ) ընտելացված չէ,
4. անտեղի ֆինանսական կամ վարչական բեռ է ներկայացնում կամ
5. էապես փոխում է այն ծառայությունների բնույթը, որոնք տրամադրում են տանտերը կամ տան սեփականատերերի միավորումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ. անմիջական վտանգները պետք է հիմնվեն տվյալ կենդանու անհատական գնահատման վրա, որի համար հիմք են հանդիսանում տվյալ կենդանու հատուկ պահվածքը, այլ ոչ վախը, չարաշահումը կամ այլ կենդանիների հետ ունեցած նախկին փորձը: Բազմացման, չափերի և քաշի սահմանափակումներ չեն կարող կիրառվել: